Հայտարարություն

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր

No: 5398-AM

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «**Սոցիալական Պաշտպանության Վարչարարության երկրորդ ծրագիր»** վարկային ծրագրի շրջանակում **«Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի վերաբերյալ հանրային իրազեկման ծառայությունների»** առաջադրանքը իրականացնելու նպատակով հայտարարվում է խորհրդատվական ընկերության ընտրության մրցույթ:

Այս առաջադրանքի նպատակն է մասնագիտացված խորհրդատվական կազմակերպության վարձման միջոցով իրականացնել Հայաստանի Հանրապետությունում ԻՄԾՀ ներդրման և գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ լայն հասարակական իրազեկում:

Ընտրված խորհրդատվական ընկերությունը պետք է իրականացնի հետեւյալ առաջադրանքները՝

1. Մշակի ԻՄԾՀ-ի ներդրման և առանձնահատկությունների վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների իրականացման տարեկան(12-ամսյա) ծրագիր, սույն ՏՀ-ի «Իրավիճակի նկարագրություն» բաժնում նշված լուսաբանման ենթակա հարցերի շրջանակում, որը պետք է ներառի իրականացման ենթակա՝
    - *1.1. ռադիո և հեռուստահաղորդումների, տեսահոլովակների, տպագիր և էլեկտրոնային մամուլում հրապարակումների, տեղեկատու նյութերի տպագրության, կլոր սեղանների, սեմինարների, կոնֆերանսների, սոցիալական ցանցերում իրազեկման արշավների ցանկը՝ համաձայն ՏՀ-ի Հավելվածի պահանջների,*
    - *1.2. միջոցառումների իրականացման եղանակները, մեթոդները, միջոցառումներն իրականացնող սուբյեկտները, միջոցառումների իրականացման պլան-ժամանակացույցը, յուրաքանչյուր միջոցառման թեման(ները), սցենարական նախնական պլանը, օրակարգին ու բովանդակությանը վերաբերվող նախնական մոտեցումները ինչպես նաև միջոցառման թիրախ խումբը(խմբերը), ակնկալվող չափերը, նախատեսված տարածքը և այլն:*

2. Իրականացնի ծրագրով նախատեսված միջոցառումները Պատվիրատուի կողմից հաստատված պլան-ժամանակացույցին համապատասխան՝ գնահատելով յուրաքանչյուր միջոցառման արդյունավետության քանակական արդյունքները՝ տվյալ միջոցառման փաստացի ստման տարածքը, միջոցառման միջոցով փոխանցված տեղեկությունների ծանոթացած թիրախային լսարանի մոտավոր չափերը և այլն:

Խորհրդատվական կազմակերպությունը պետք է ունենա՝

- հանրային կապերի և զանգվածային լրատվության ոլորտում գործունեության առնվազն 5 տարվա փորձառություն,

- նմանատիպ իրազեկման միջոցառումների իրականացման առնվազն երկու հաջողված փորձ (բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի վերաբերյալ իրազեկման փորձը կդիտվի առավելություն),
- ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բարձր որակավորում ունեցող մասնագետներ (լրագրողներ, սցենարիստներ, ռեժիսորներ, օպերատորներ և իրազեկող ու քարոզչական բնույթի միջոցառումների նախագծման և իրականացման մեծ փորձ ունեցող այլ մասնագետներ) կամ այդպիսի մասնագետներ ունեցող փորձառու գործընկեր կազմակերպություններ,
- ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների, ինչպես նաև ԱՍՀՆ համակարգի միջոցով մատուցվող ծառայությունների վերաբերյալ՝ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ չափով իրազեկ մասնագետներ,
- համապատասխան իրազեկման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական ռեսուրսներ կամ այդպիսի ռեսուրսներ ունեցող գործընկեր կազմակերպություններ:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են մինչեւ **սույն թվականի դեկտեմբերի 23-ը** ներկայացնել հետաքրքրվածության հայտեր անհրաժեշտ տեղեկություններով (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին նմանատիպ հանձնարարականների իրականացման փորձի, վերընշված պահանջներին բավարարող անձնակազմի առկայության վերաբերյալ, աշխատակազմի կենսագրական թերթիկները եւ այլն) ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի փողոց 4
Հեռախոս. (374 11) 910581
Էլ. փոստ. info@ffpmc.am